ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

09.10.2020 12:56

«Մենք ենք, մեր սահմանները.

բոլորս Արցախի համար»

Փաստաբանները ոչ միայն իրենց մասնագիտական առաքելությամբ, այլ նաև հասարակական նախաձեռնություններով մշտապես մասնակցում են Հայաստանի և Արցախի առջև ծառացած խնդիրների լուծումներին:

Փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների, ֆրանսիահայ բարերար Ռայմոնդ Եզեգելյանի, ինչպես նաև 12 ֆրանսիահայ փաստաբաններից ստացված ընդհանուր միջոցներից՝ **2020թ. հոկտեմբերի 2-ին 3.709.000 (երեք միլիոն յոթ հարյուր ինը հազար)** ՀՀ դրամի չափով օժանդակություն է ցուցաբերվել Արցախի Հանրապետությանը նախապես պայմանավորված պարենային մթերքների ձևով:

Այս ընթացքում փաստաբանների և ֆրանսահայ բարերար Ռայմոնդ Եզեգելյանի կողմից կրկին փոխանցումներ են կատարվել, ինչպես նաև փաստաբանական դպրոցն է փոխանցել նվիրատվության ֆոնդին 500.000 ՀՀ դրամ: Փաստաբանների պալատի խորհուրդը բյուջեով փաստաբանների ամանորյա միջոցառման համար նախատեսված 1.200.000 ՀՀ դրամը նույնպես ուղղել է նվիրաբերության ֆոնդին:

Փաստաբանների պալատի խորհուրդը 09.10.2020թ. թիվ 20-Լ միաձայն ընդունված որոշմամբ որոշել է նվիրաբերության ֆոնդի գումարից **5.500.000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ** փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ փաստաբանների պալատի կողմից արդեն կատարված օժանդակության ընդհանուր գումարը կազմում է **9.209.000 (ինը միլիոն երկու հարյուր ինը հազար) ՀՀ դրամ**:

Նվիրատվության ֆոնդի մնացորդային միջոցները լրացվելուց հետո նույնպես կուղղվեն հանրօգուտ նպատակներին:

Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությանը միացել է նաև Փարաքարի Սուրբ Հարություն Եկեղեցին՝ տրամադրելով 1.000 կգ ալյուր, որը հանձնվել է Հայաստանում Արցախի ներկայացուցչությանը:

Փաստաբաններից շատերն իրենց օժանդակությունն անմիջականորեն ուղղել են «Հայաստան» համահայկական հիմնադրամին և Արցախին:

Առաջնագծում են գտնվում նաև փաստաբանները, որոնց ընտանիքի անդամների հետ Փաստաբանների պալատի աշխատակիցները կապի մեջ են:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

մամուլի ծառայություն

Առաջարկվող նորություններ

30.09.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒՆԵՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

08.10.2020ԻՐԱՎԱՍՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ՁՈՐԱՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՐՑՄԱՆԸ

08.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })